

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳՎԱԿՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի եւ զանգվածային հաղորդակցության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր.

հիմնվելով այն համոզմունքի վրա, որ մշակույթի, արվեստի եւ զանգվածային հաղորդակցության բնագավառներում համագործակցությունը նպաստում է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ փոխըմբռնմանը, բարիդրացիական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը,

նկատի ունենալով երկու պետությունների միջեւ երկարատեւ պատմական կապերը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն երաժշտարվեստի, թատերարվեստի, գեղարվեստի, կինեմատոգրաֆիայի, գրադարանային եւ թանգարանային գործի, պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանման, ժողովրդական արհեստների, դեկորատիվ-կիրառական, ինքնագործ, էստրադային եւ կրկեսային արվեստի, ինչպես նաեւ հումանիտար գործունեության այլ տեսակների բնագավառներում համագործակցության զարգացման համար:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը կնպաստեն Կողմերի պետություններում գործող ստեղծագործական միությունների եւ միավորումների, ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ ուղիղ կապերի հաստատմանը եւ զարգացմանը:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը կհամագործակցեն մշակույթի եւ արվեստի առանձին մասնագիտությունների գծով աշխատակիցների պատրաստման եւ որակավորման բարձրացման բնագավառներում, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պայմանագրերով եւ արձանագրություններով սահմանելով աշակերտների, ուսանողների, ասպիրանտների եւ մանկավարժների երկկողմ փոխանակումների սկզբունքները, ինչպես նաեւ կաշակցեն Կողմերի պետությունների մշակույթի եւ արվեստի ուսումնական հաստատությունների միջեւ ուղիղ համագործակցությանը:

Կողմերը կնպաստեն ուսումնական ստեղծագործական ԲՈՒՀ-երի կողմից իրականացվող մշակութային ակցիաների եւ միջոցառումների /կուրսեր, մրցույթներ, փառատոներ/ մասին տեղեկատվության փոխանակմանը եւ Կողմերի ներկայացուցիչների մասնակցությանը Հայաստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպվող կոնֆերանսներին, կոլոքվիումներին, նստաշրջաններին եւ գիտական գիտելիքների փոխանակման այլ ձեւերին:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը միմյանց փոխադարձաբար կտեղեկացնեն մշակույթի, զանգվածային հաղորդակցության եւ մտավոր սեփականության բնագավառում գործունեության գերակա ուղղությունների, գիտական հետազոտությունների արդյունքների մասին, այդ նպատակով կանցկացնեն համատեղ գիտագործական եւ ստեղծագործական սեմինարներ,

կոնֆերանսներ եւ գիտաժողովներ, կաջակցեն գիտական աշխատությունների ժողովածուների հրատարակությանն ու թարգմանությանը՝ կիրառելով համագործակցության ձեւերի բազմազանությունը:

Կողմերը կնախատեսեն սոցիալ-մշակութային եւ այլ բնագավառներում փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացում, ներառյալ յուրաքանչյուր Կողմի մշակութային-տեղեկատվական դաշտի տվյալների բազայի հասանելիության ապահովումը համատեղ ծրագրերի իրականացման միջոցով:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերն կապահովեն մշակութային արժեքների հասանելիությունը մյուս Կողմի պետության քաղաքացիների համար:

ՀՈՂՎԱԾ 6

Կողմերն՝ իրենց ազգային օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իրենց իրավասությունների շրջանակներում, կհամագործակցեն մյուս Կողմի պետության տարածք ապօրինի ներմուծված մշակութային արժեքների հայտնաբերման եւ վերադարձնելու ուղղությամբ:

ՀՈՂՎԱԾ 7

Կողմերը կապահովեն Կողմերի պետությունների տարածքներում ապրող ժողովուրդների ազգային, էթնիկ, կոնֆեսիոնալ մշակույթների ազատ եւ իրավահավասար զարգացումը, պայմաններ կստեղծեն Հայաստանի Հանրապետությունում ռուս ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց եւ Ռուսաստանի Դաշնությունում հայ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց ազգային ինքնության պահպանման, զարգացման եւ արտահայտման համար:

Կողմերը, հնարավորության սահմաններում կաջակցեն նշված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին Կողմերի պետությունների տարածքում զանգվածային տեղեկատվության միջոցների օգտագործմանը, ինչպես նաեւ մեթոդական եւ այլ օգնություն կցուցաբերեն յուրաքանչյուր Կողմի պետության ազգային փոքրամասնությունների մշակույթի եւ արվեստի գործիչների միավորումների եւ միությունների, մշակույթի կենտրոնների հիմնադրման ժամանակ:

ՀՈՂՎԱԾ 8

Կողմերը համագործակցություն կիրականացնեն կինեմատոգրաֆիայի բնագավառում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի եւ զանգվածային հաղորդակցության նախարարության ենթակայության տակ գտնվող ազգային կինոարխիվների միջեւ:

Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն.

- կինեմատոգրաֆիայի աշխատողների ստեղծագործական միությունների եւ համապատասխան հաստատությունների միջեւ համագործակցության համար,
- երկու պետություններում կազմակերպվող գործընկեր-պետությունների կինեմատոգրաֆիստների եւ արվեստի գործիչների, ֆիլմերի մասնակցությանը միջազգային կինոփառատոներին՝ համաձայն այդ փառատոների կանոնակարգի,
- կինոնախագծերի իրացմանը եւ կինոարտադրության փոխանակմանը՝ ոչ առեւտրային հիմունքներով:

ՀՈՂՎԱԾ 9

Կողմերը համագործակցություն կիրականացնեն իրենց պատմամշակութային

ժառանգության հուշարձանների եւ օբյեկտների պաշտպանության, պահպանության եւ վերականգնման բնագավառում:

Կողմերը կփոխգործակցեն մշակույթի բնագավառում միջազգային նախագծերի իրականացման շրջանակներում:

Համագործակցության ձեւերը, փորձագետների խմբերի ձեւավորումը, աշխատակարգը կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համապատասխան հաստատությունների միջեւ առանձին պայմանագրերով եւ համաձայնագրերով:

ՀՈՂՎԱԾ 10

Կողմերը համագործակցություն կիրականացնեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության գրադարանների միջեւ գրափոխանակմանը, գրադարանային գործին նվիրված գրադարանավարների եւ մատենագիրների մասնակցությանը գիտագործնական կոնֆերանսներին, գիտաժողովներին, սեմինարներին մասնակցությանն աջակցելու ճանապարհով:

ՀՈՂՎԱԾ 11

Կողմերն իրենց իրավասության շրջանակներում կաջակցեն զանգվածային ստեղծկատվության տպագիր միջոցների, հրատարակչությունների, գրատարածման կազմակերպությունների եւ պոլիգրաֆիկ ձեռնարկությունների միջեւ ուղիղ համագործակցությանը, այդ թվում՝ փոխադարձ մասնակցությանը գրքի ցուցահանդեսներին եւ տոնավաճառներին, տպագիր արտադրանքի ցուցադրություններին եւ այլ համանման միջոցառումներին: Համագործակցության կոնկրետ ձեւերն ու պայմանները կորոշվեն մասնակիցների կողմից:

ՀՈՂՎԱԾ 12

Կողմերը կաջակցեն ժողովրդական ստեղծագործության բնագավառում կապերի ընդլայնմանը, ժողովրդական վարպետների աշխատանքների ցուցահանդեսների, ստեղծագործական սեմինարների կազմակերպմանը, Կողմերի պետությունների տարածքում անցկացվող ժողովրդական ստեղծագործության փառատոներին եւ երգի տոներին ազգագրական /ֆոլկլոր/ համույթների մասնակցությանը:

ՀՈՂՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի լիազորված ներկայացուցիչները կկնքեն առանձին պայմանագրեր:

ՀՈՂՎԱԾ 14

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ եւ փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ: Փոփոխություններն ու լրացումները կձեւակերպվեն առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով եւ կհանդիսանա դրա անբաժանելի մասը:

ՀՈՂՎԱԾ 15

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ իրականացման հետ կապված բոլոր տարաձայնությունները Կողմերի միջեւ լուծվում են բանակցությունների եւ խորհրդատվությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը, այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցում ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2007 թվականի մայիսի 21-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թ. հոկտեմբերի 12-ին: